ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գագիկ Սարգսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գագիկ Սարգսյանը 2011թ. դեկտեմբերի 30-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի եւ 234-րդ հոդվածի 1-ին կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին, 3-րդ, 5-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 91-րդ հոդվածների, 92-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 14-րդ, 14.1-րդ, 15-րդ եւ 98-րդ հոդվածների պահանջներին:

Գործի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

1. Հարկ է նշել, որ դիմողի կողմից պարզորոշ եւ հստակ չեն վկայակոչված օրենքի այն դրույթները /հոդվածները/, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից ընդհանրապես անտեսված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի

եւ 69-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դիմումի ընդունելիության համար պարտադիր համարվող վավերապայմանները՝ այնքանով, որքանով դիմումում բացակայում է ու ներկայացված չէ առհասարակ որեւէ հիմնավորում վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ: Հարկ է արձանագրել նաեւ, որ անհրաժեշտ եւ բավարար իրավաբանական փաստարկներով հիմնավորված չէ դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումների փաստի եւ քննության առարկա իրավանորմերի՝ Սահմանադրությանը հակասելու միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը:

Մատնանշված հանգամանքները հիմք են տալիս եզրահանգելու, որ տվյալ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է /նշված օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետ, 69-րդ հոդվածի 7-րդ մաս եւ ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

2. Գործի քննությունը մերժելու՝ օրենքով սահմանված հիմք է նաեւ այն կարեւոր պարագան, համաձայն որի՝ դիմողը փաստորեն ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց: Այլ խոսքով՝ դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն սահմանադրական դատարանին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գագիկ Սարգսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

23 հունվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-2